

Ստոկհոլմյան պատմություն

Վիթխարի անտառում իջել էր խիտ մառախուղ, ասես հսկայական չափսերի մի աղջիկ անուշադիր քայլում է անտառի վրայով և երկար զգեստի սպիտակ փեշը սահեցնում բարձր ծառերի վրայով: Անտառում, միջատներից և սնկերից բացի, ուրիշ ոչ մի բան չէր ապրում:

Այդ երեկո անտառը կարծում էր, թե իրեն ոչինչ չի սպառնում: Սակայն հարևան սակավամարդ քաղաքից մի ընտանիք, հոր վերադարձի կապակցությամբ, որոշում է անտառից սնկեր հավաքել: Ամեն մեկը վերցնում է մի զամբյուղ և սկսում մանրամասն ընտրել սնկեր, որպեսզի հանկարծ թունավորը չքաղեն: Երբ անտառում կատարյալ մթություն է տիրում, և սկսում են լսվել գիշերային միջատների ցածր ձայները, արդեն բոլոր չորս զամբյուղները լի էին անուշաբույր սնկերով և պատրաստ էին խորովվելու:

-Եկեք երկու թուփեր ստենք, հանգստանանք ու հետ գնանք քաղաք,- ասաց Լիլիթը և զամբյուղը դնելով երեկվա անձրևից հետո եկած խոնավ հողին՝ զգույշ նստեց հորիզոնական պառկած ծառի վրա:

-Յոգնեցի՞ր, մամ: Տո՛ւր, ես քոնը կտանեմ:

-Չէ, Արեգ ջան, արդեն լավ եմ, ես կտանեմ:

Եվս մի քանի թուփեր բոլորով նստեցին, լապտերների լույսի տակ գրուցեցին և շարունակեցին ճանապարհը: Դեռ շատ չէին հեռացել հանգստի վայրից, երբ հանկարծակի Սոնան ասաց.

-Վա՛յ, պա՛պ, թևնոցս մոռացա ծառի վրա:

-Արե՛գս, քրոջդ հետ գնա Էլի: Ես մի լապտերը վերցրա,- ասաց՝ ձեռքի լապտերը պարզելով որդուն,- մենք դանդաղ կքայլենք, եկեք:

Արեգը իբրև համաձայնության նշան ժպտաց հորը, վերցրեց լապտերը,

փոխանցեց քրոջը և ձեռքը զցելով քրոջ ուսերին՝ գրկեց: Յենց այդպես Էլ քայլեցին դեպի ծառը:

* * *

Եկեղեցի: Այնքան մեծ, որ արձագանքը կլսվեր ամենաքիչը վեց-յոթ անգամ, բայց արդեն մի քանի տարի էր, որ ոչ մի ծպտուն դուրս չէր եկել, դրանից ականջներում անտանելի, շաչուն գվվոց էր առաջանում: Յսկայական առաստաղից կախված լամպերը կարծես դանդաղ գործող պայթուցիկներ լինեին. ուր որ է կճաթեին: Իսկ դատարկ նստարանների շարքերին նայելուց գլուխը պտտվում էր, ստամոքսում առաջանում տհաճ զգացում: Նստարանները, արդեն երկար ժամանակ է, անշարժ կանգնած էին հնամաշ և փոշուց խամրած հսկա գորգի վրա:

Սրբապատկերներն ու խճանկարներն՝ ահռելի, որ մարդը իրեն փոքր ու անզոր էր զգում, իսկ երկարուկ ու նեղ պատուհանները այնքան բարձր էին տեղադրված, որ միայն նստարանին թաթերի վրա կանգնելով էր կարելի հայացք զցել մյուս աշխարհ: Դրսում էլ ի՞նչ էր: Ամբողջությամբ շրջապատված խորը ձոր, որի հատակը անհնար էր տեսնել խիտ շամանդաղի պատճառով: Միայն մի կողմից էին երևում թշվառ ու անմարդաբնակ փողոցները, որոնք միացված էին քաղաքին սպիտակ, բայց ժանգոտած կամրջով, որը կառուցվել էր 70-ականներին:

Լսվեց եկեղեցու գաղտնի սենյակի դռան բացվելու ձայնը: Սենյակի միակ պատուհանը, որը հասուն մարդու հասակից երկու անգամ բարձր էր, միակ լույսի աղբյուրն էր: Դռան բացվելու հետ մեկտեղ կրկնապատկվեցին լույսի ալիքում երևացող փոշու հատիկները, որոնք ավելի շատ նման էին փոքրիկ փերիների թռիչքի հետևանքով թռիչներից թափվող կախարդական փայլի:

Սենյակ մտան երկու հաղթանդամ տղամարդ՝ ձեռքներին երկաթ դուլեր, մեջը սառը ջուր: Իսկ սենյակի կենտրոնում անգիտակից ընկած էր մի երիտասարդ տղա: Նրանք անզգուշորեն դուլերի պարունակությունը լցնում են տղայի վրա և արագ դուրս գալիս սենյակից՝ իրենց հետևից կողպելով հնամաշ փայտե դուռը: Տղայի համար իր նուրբ մաշկի և սառը ջրի հպումը կարծես ուժգին ապտակ լիներ, որն էլ արթնացրեց նրան: Տղան փորձեց կանգնել, բայց զգաց, որ վերջույթներից կարծես բոլոր ուժերը ներարկիչով հանած լինեն: Նստեց՝ հենվելով մի ձեռքի վրա: Ուղղահայաց դիրք ընդունելու պատճառով գանգուր վարսերն ուղղվեցին և ընկան ճերմակ ճակատի վրա: Արևի ճառագայների ներքո տղայի բաց շագանակագույն վարսերը կարծես թափանցիկ լինեին:

Անտանելի սառը ջուրը հոսեց քունքին հաված մազերից, արագորեն սահեց այտերի վրայով դեպի վիզը, հետո ուտերը և հասնելով տղայի գոտկատեղին՝ ստիպեց նրան թափահարել մարմինը:

Այդ ամբողջ տհաճություններից հետո առաջին բանը, որ զգաց, զարշելի հոտն էր: Նկուղի՞, թե միգուցե կավի՞: Բայց ոչ, այս հոտն ավելի տհաճ էր: Սենյակում կատարյալ լռություն էր, գերեզմանատան շրջակայքի նմանվող լռություն: Որոշ ժամանակ անց կանգնեց, պտտվեց սենյակում, փորձում էր հասկանալ՝ որտեղ է, ինչպես է հայտնվել այստեղ: Սկսեց ուսումնասիրել պատից կախված լուսանկարները, եկեղեցիների լուսանկարներ, առաջին հայացքից ոչ մի պիտանի բան չկար նրանցում: Անկյունում կար փայտե խոշոր սեղան և նմանատիպ աթոռներ:

Եվ ահա դուռը կրկին բացվեց: Տղան ինքնաբերաբար հետքայլ արեց: Այս անգամ սենյակ մտան տասից ավել միանձնուհիներ:

Միանձնուհի՞: Տղան մտածեց՝ երևի տեսիլք է: Բայց նրանք ավելի քան իրական էին: Բոլորը միանման հագուստով: Եվ ամենից սարսափազդուն նրանց հայացքներն էին՝ սառը, կարծես առանց հոգի աչքերը փակցված էին գունատ դեմքերին, և կապ չունեին, որ շարքերում կային ինչպես միջին տարիքի, այնպես էլ զառամյալներ և բավականին երիտասարդներ:

-Ողջույն,- նման պաշտոնական և սառը տոնով դեռ ոչ ոք չէր դիմել տղային,- Արե՞գ: Ճի՞շտ եմ հիշում:

Արեգը քարացավ, կարծես նրան էր նայում ոչ թե միանձնուհի, այլ հենց ինքը՝ Մեդուզա Գորգոնան: Նա կամաց- կամաց սկսում էր հիշել, թե ինչ է պատահել իր և քրոջ հետ:

-Սոնան ու-ու՞ր ա:

Վախի՞ց էր, թե՞ սառը ջրից, որ չէր կարողանում սահուն խոսել:

-Սոնան ապահով...,- ցանկանում էր պատասխանել ամենաերիտասարդը՝ Լիլին, երբ նրա նախաբազկից կոպտորեն բռնեց Գայանեն: Գայանեին կարող էին համարել միանձնուհիների “գլխավորը”, գուցե մայրապետն էր: Բոլոր կարգադրությունները և որոշումները նա էր կայացնում ինչ- որ անհասկանալի պատճառով:

Արեգը գրեթե ամեն ինչ հիշեց այդ ընթացքում. հիշեց, թե ինչպես էր հայրը երկարատև բացակայությունից հետո տուն եկել, հիշեց սնկերի բույրը, իսկ այդ

սնկերը մինչ այսօր զամբյուղներով սեղանի վրա դրված են և կորցրել են իրենց անուշ բույրը: Դե իհարկե, երեխաների կորստից հետո ոչ մի ծնող անգամ չի նայի սննդի վրա:

- Ինչպե՞ս եք դուք ինձ այստեղ բերել,- առանձնահատուկ կոպտությամբ արտասանեց «դուք» բառը՝ ցույց տալով, որ իր համար շատ կասկածելի է, քանի որ կանայք պարզապես չէին կարող իրեն և քրոջը քարշ տալ այստեղ,- և որտեղ եմ ես,- ասաց՝ տեղում կանգնած կիսատ պտույտ կատարելով:

Գայանեն դանդաղ քայլերով մոտեցավ տղային: Տղան հանկարծակիի եկավ, երբ շրջվեց սկզբնական դիրքին և այդքան մոտ տեսավ նրան: Մի քանի քայլ հետ արեց և չնկատելով գետնի անհարթությունը՝ ընկավ հատակին: Գայանեն, զգուշորեն բռնելով երկար սև զգեստը, կքանստեց այնքան, որ իր և Արեգի դեմքերը հավասար մակարդակի վրա էին:

- Դու նման ես քրոջը,- ձեռքը տարավ դեպի տղայի ճակատը, սահեցնելով իջեցրեց՝ թավ հոնքերին դիպելով, այնուհետև թույլ բռնեց դնչից և գլուխը մի փոքր վեր բարձրացրեց: Արեգը վախից չէր կարողանում ընդդիմանալ,- բայց դու ավելի նուրբ ես: Ախ, կանաչ աչքերը: Մի՞թե հրաշք չէ,- հայացքը ուղղեց միանձնուհիներին: Նրանք էլ իրենց հերթին գլխով համաձայնության նշան արեցին:

Գայանեն կանգնեց և հետ գնաց նախկին տեղը: Սենյակ մտան նույն երկու տղամարդիկ: Բռնեցին Արեգի թևատակերից և վեր բարձրացրին: Արեգը կարծում էր, թե արդեն հասկացել էր իրավիճակի ողջ լրջությունը և ծնկներում դող էր սկսվել: Բայց ոչ:

- Դրսում տարածվել է անհայտ վիրուս,- խոսքը սկսեց տարիքով ամենամեծը՝ Լիան: Նա շատ հաճախ մոռանում էր սեփական տարիքը, բայց մյուսները հիշում էին բոլորի տարիքները: Միանձնուհի Լիան 98 տարեկան է, Գայանեն՝ 49, Լիլին՝ 20, և այդպես անգիր գիտեին մյուսների տարիքները՝ չնայած երբեք չէին բարձրաձայնում այդ մասին,- և այս անգամ էլ, ինչպես նախկինում, կապված արյունները կփրկեն մեզ:

- Վի՞րուս: Մեր արյունները կփրկե՞ն: Ի՞նչ եք գառանցում:

Իրենց տիրուհիների հետ անհարգալից խոսելու պատճառով հաղթանդամ տղամարդիկ հետ քաշեցին ուները՝ ցավ պատճառելով: Տղայի դեմքը կծկվեց ցավից, հոնքերը մոտեցան իրար, իսկ քթի վրա մի պահ հաստ կնճիռներ երևացին: Միանձնուհիների դեմքի քարե արտահայտությունը չփոխվեց:

- Արեգ, սիրելի՛ս, շատ հարցեր ես տալիս: Բայց մի՞թե քեզ հանգիստ պետք չէ: Մոտավորապես կես ժամից քեզ ուտելիք կբերենք, քեզ ուժ է պետք:

- Ավելի ճիշտ՝ քո ուժը մեզ է պետք,- ծեր չարագործի ծիծաղով ասաց միանձնուհի Լիան:

- Լավ, իսկապես փորձիր հանգստանալ, մենք դեռ նորից կհանդիպենք:

Օդից վայր զցեցին տղային՝ ասես բանջարեղենով լի մի պարկ: Դուրս եկան սենյակից, և անմիջապես լսվեց փականի պտտվելու ձայնը:

Արեգը սարսափած հայացքով նայում էր ձեռքի հնաճ ժամացույցին, որը պապից էր հիշատակ մնացել իրեն: Գործուղումների պատճառով հոր անընդհատ բացակայությունները պապն էր լրացնում: Իսկ եկեղեցու գլխավոր դռների դիմաց բուռն քննարկումներ էին:

- Եվ այսպես, ո՞վ է հսկելու տղային: Մենք չենք կարող լեռնաբնակներին այստեղ պահել, դա վտանգավոր է:

- Պարզ չէ՞,- հսկայական կուզի պատճառով դժվարությամբ գլուխը վեր բարձրացնելով՝ ասաց միանձնուհի Լիան,- դա պարզից էլ պարզ է: Լիլին՝ նա ամենաերիտասարդն է, ավելի շատ ուժ ունի, քան մեզնից որևէ մեկը:

Բոլոր միանձնուհիները ցածրաձայն սկսեցին քննարկել, և ըստ շշուկների՝ կարծես բոլորը համաձայն էին: Մտում էր՝ լսեին Լիլիի խոսքը: Բոլորը նայում էին նրան:

- Ես մեծ պատիվ կհամարեմ նման դժվար ժամանակներում պարտքս հանձնել Ձեր առջև,- երկու ձեռքերի մատները իրար խաչած և գլուխը կախ՝ ասաց Լիլին: Երեսուն րոպեն լրացավ: Սենյակ մտավ Լիլին՝ ձեռքին սկուտեղով ուստիլք: Արեգը, ինչպես թողել էին, նույն կերպ ընկած էր փոշոտ, տարբեր զգվելի միջատներով լի հատակին: Լիլին դանդաղ քայլերով մոտեցավ տղային, չէր ցանկանում վախեցնել նրան:

Ծնկեց նրա կողքին, Արեգը հետ գնաց և նստած դիրքով հենվեց պատին: Լիլին սկուտեղը դրեց տղայի ոտքերին: Արեգը գրեթե երկու օր է՝ հաց չէր կերել: Արագ վերցրեց հացի կտորը, բայց չկարողացավ բարձրացնել: Լեռնաբնակները այնպես էին ցավեցրել տղայի ուսերը, որ ձեռքերը ամբողջությամբ անզգայացել էին: Լիլին վերցրեց հացը տղայի ձեռքից, կիսեց և մոտեցրեց բերանին: Արեգը զարմացած նայում էր նրան, չէր հասկանում, թե ինչու է օգնում: Աչքերը մի կետի հառած՝ անգիտակցաբար ծամում էր հացը: "Այս անգամ էլ, մյուս անգամների նման, կապված արյունները կփրկեն մեզ": Ի՞նչ էր դա նշանակում:

- Միանձնուհի Լիան ի՞նչ նկատի ունեւր,- հայացքը ուղղեց Լիլիին:

- Նա ամեն ինչ ասաց: Տարածաշրջանում նոր մահացու վիրուս է:

- Իսկ մենք էդ ամենի հետ ի՞նչ կապ ունենք:

- Քո ու Սոնայի արյունները մաքուր են: Մենք լիալուսին կօգտագործենք ձեր արյունը, կմիախառնենք և կստանանք Էլիքսիր դեղամիջոց, որը թույլ չի տա մեզ վարակվել,- գոչով վերցրեց տարայի միջի տաք արգանակից, որի մեջ անհասկանալի մսի կտորներ էին լողում, մոտեցրեց Արեգի նուրբ շուրթերին:

Արեգը գլուխը հետ տարավ՝ քսելով պատին: Անհայտ ծագման միսը ո՞վ կցանկանար ուտել,- տավարի միս է, հանգիստ եղիր, մենք քեզ չենք թունավորի: Արեգը իրարից հեռացրեց շուրթերը: Լիլին զգուշորեն կերակրեց Արեգին, այնուհետև վերցրեց դատարկ ամանով սկուտեղը և կանգնեց:

-Սոնան իսկապե՞ս լավ է,- վեր նայեց բարձրահասակ միանձնուհուն և անմիջապես հայացքը իջեցրեց:

-Այո՛: Նա ապահով տեղում է:

-Եվս մեկ հարց խնդրում եմ:

-Լսում եմ:

-Հաջորդ լիալուսինը ե՞րբ է:

Լիլիի աչքերը քարացան.

-Հաջորդ լիալուսինը երեք օրից է: Երե՛ք:

* * *

-Արե՛գ: Սո՛նա: Արձագանքե՛ք: Արե՛գ,- ամբոխի ձայները լսվում էին շատ հեռվից և որքան գնում ավելի էին մոտենում:

Առաջին հայացքից այդ սակավամարդ քաղաքից այնքան մարդ էր կամավոր դուրս եկել փնտրելու երիտասարդներին, որ բոլոր կարծրատիպերն անմիջապես կտորվում էին քաղաքի մասին: Ոստիկանական շները մարդկանցից մի քանի մետր առաջ վազում էին Արեգի և Սոնայի հագուստի հոտի հետքերով: Ձայները հասան նաև գերիների ականջներին: Այդ ժամանակ պատանդ դառնալուց հետո Արեգն առաջին անգամ լսեց քրոջ ձայնը.

-Մա՛մ: Ես այստե՛ղ եմ: Մա՛մ, պա՛րպ:

Արեգն էլ սկսեց բղավել.

-Յե՛յ, մենք այստե՛ղ ենք: Եկե՛ք:

Հանկարծ ուժեղ հարվածով բացվեց սենյակի դուռը: Կրկին լեռնցիներն էին: Բայց ինչո՞ւ էին նրանք այդպես ուշադիր հետևում նրանց ամեն մի հրամանին: Սակայն հիմա դա ամենաքիչն էր հետաքրքրում Արեգին, քանի որ դռան մոտից իրեն էր մոտենում մի հսկա, ահռելի բռունցք, և որքան մոտենում էր, այդքան ավելի մեծ և վախենալու էր երևում: Իրականում այդ ամենը տևեց մի քանի ակնթարթ:

Արթնացավ այտի ցավից: Աչքերը բացեց և առաջին բանը, որ տեսավ, Լիլիի թաց աչքերն էին և գունատ դեմքը: Սպիրտի մեջ թաթախած բամբակով լվանում էր այտի վերքը:

-Յեռու գնացեք,- ասաց և վեր թռավ տեղից, հետ քայլեր արեց դեպի պատը:

Ուղիղ Արեգի գլխավերևում պատուհանն էր, որի լույսը ընկնում էր Լիլիի վրա և նրան հաղորդում անիրական գեղեցկություն,- մոտ չգաք: Սոնայի ձայնն էլ եք այս կերպ կորել, ուր է նա,- սկսեց բարձր բղավել,- Սո՛ն, լսո՛ւմ ես ինձ, Սո՛նա:

-Լռի՛ր, լռի՛ր տղա,- մոտեցավ Արեգին և ձեռքերով փակեց նրա բերանը,- լռի՛ր: Նա էլի կգա, չեմ հասկանում, քի՛չ էր քեզ սա:

Այդ ընթացքում ոստիկանական շներն արդեն ներխուժել էին եկեղեցի և հոտհոտում էին բոլոր անկյունները: Ոստիկաններն էլ մտան եկեղեցի:

- Բարի օր, տիկնա՛յք: Օրեր առաջ հարևան քաղաքից երկու երիտասարդ են կորել: Տեղկություն չունե՞ք:

- Օ՛, ինչ վատ բան է պատահել,- պատասխանեց Գայանեն իրեն հատուկ անմեղ հայացքով,- ցավում եմ, որ չեմ կարող օգնել: Ես կաղոթեմ նրանց համար:

Շներից մեկը կանգնեց դատարկ նստարանների շարքերի միջև և սկսեց բարձր հաչալ:

- Ներողություն եմ խնդրում անհանգստություն պատճառելու համար:

Շնորհակալություն,- բռնեց շան վզկապից և արագ գնաց դեպի ելքը:

- Ինչի համար: Տոտություն:

Արդեն հանգիստ տոնով, բայց ավելի կատաղի աչքերով Արեգը նայեց աղջկան և ասաց.

- Գիտես ինչ, ես կփախնեմ, քրոջս էլ կգտնեմ: Մենք ստեղ չենք մնա: Լսեցի՞ր:

- Ես արդեն փորձել եմ, չես կարող փախչել նրանցից: Նրանք ինչ- որ կերպ բոլոր լեռնցիներին դարձրել են իրենց ստրուկները, և դու ինքդ տեսար, թե այդ հաղթանդամ տղամարդիկ ինչպես են գլուխները կախ կատարում նրանց ամեն մի հրամանը, մասնավորապես միանձնուհի Գայանեի: Եկեղեցու հարակից տարածքը հերթափոխով հսկվում է: Այստեղից դուրս գալու հավանականությունը չկա՛ն է:

- Չնչին է, բայց կա: Եվ, ի դեպ, դու ինչո՞ւ ես փորձել գնալ այստեղից:

- Որովհետև ես այստեղ եմ եղել դեռ փոքր հասակից իմ կամքին հակառակ,- կրկին մոտեցավ Արեգին, որպեսզի վերքը մաքրի: Չգուշորեն մոտեցրեց ձեռքը այտին և սկսեց մաքրել ողջ արյունը,- այստեղ ինձ մայրս է բերել: Այդ օրվանից նրա մասին ես տեղեկություն չունեմ: Երևի էլ չգիտեր՝ ինչ անի անպետք աղջկա հետ:

- Այդպես մի ասա, դու նրանց նման չես, և նա սխալվել է, դու անպետք չես,- բռնեց ձեռքերը և նայեց ուղիղ աչքերի մեջ, որոնց մեջ ասես ողջ աշխարհի թախիժն էր լցված,- նման բան էլ չասես:

Այդ պահին ներս մտավ լեռնաբնակներից մեկը: Արեգը արագ բաց թողեց Լիլիի ձեռքերը: Լիլին էլ իր հերթին մի քայլ հետ արեց:

- Տիկի՛ն, վերջացրեք, ես պետք է դուռը փակեմ և գնամ:

- Եվս երկու րոպե:

Լեռնաբնակը գլխով արեց և դուրս եկավ սենյակից: Իսկ երկու թույլ հետո իրեն հետևեց միանձնուհի Լիլին:

Անցան թույլներ, և լավեց թոմփոց: Արեգի սենյակից էր: Լեռնցին արագ վազելով մտավ սենյակ: Անկյունում դրված սեղանը հայտնվել էր պատուհանի տակ, իսկ իրեն շրջապատող աթոռների մի մասը սեղանի վրա էին, մյուս մասը՝ հատակին: Արեգը շարել էր աթոռներն այնպես, որ կանգնի վրան և հասնի բարձրադիր պատուհանին: Ինչ խոսք, հասավ: Սակայն լեռնցին իր հսկա ձեռքով բռնեց տղայի ոտքից և օդից գցեց հատակին:

Հասավ և բռնեց վզից: Արեգը ամբողջ մարմով հրում էր նրան, ցանկանում էր ազատվել իրենից հսկա ճանկերից: Այդ վայրկյանին սենյակ են մտան միանձնուհիները:

- Ստեփան, բաց թող երիտասարդին, - հրամայեց Գայանեն անտաշ լեռնցուն, - օգնիր, թող կանգնի, - Ստեփանը կատարեց նրա հրամանը, - մի՞թե մենք այսպես ենք վարվում մեր փրկիչների հետ: Հը՞:

- Ոչ, տիկին, - պատասխանեց լեռնցին՝ ինչպես մոր առջև կանգնած, չարություն արած երեխան. գլուխը կախ, ցածրաձայն:

Գայանեն առաջացավ դեպի Արեգը, բռունցքը մոտեցրեց նրա քթին, հետո կտրուկ բացեց բռունցքը և հրդեհների նման կարմիր, ալ կարմիր ինչ-որ փոշի փչեց դեմքին: Արեգը ակնթարթորեն հանգավ՝ ասես կոճակի մի սեղմումով անջատված լամպ:

Խորանի առջև դրված նստարանները զբաղեցրել էին միանձնուհիները:

- Նա միայնակ չէր կարող տեղափոխել նման ծանր սեղանը, մեկը նրան հաստատ օգնել է: Բայց ով՞:

- Եվ, ի դեպ, նա շատ խելացի է: Ո՞վ կմտածեր պատից կախված նկարի մեխով բացել պատուհանի ճաղերի կողպեքը:

- Իսկապես:

- Կարող եք հանգիստ լինել այդ հարցով: Լեռնցիները բոլոր նկարները, մեխերը և կահույքը գիշերը կհանեն սենյակից: Իսկ տղան այդ մասին կիմանա միայն առավոտյան:

- Ինձ թվում է՝ նրան այդ լեռնաբնակն է օգնել, - հայտնեց իր կարծիքը միանձնուհի Լիան:

- Այո, ես էլ եմ այդպես կարծում:

- Լիալուսինը շուտով է: Չի կարելի ռիսկի դիմել: Աշխատանքը կատարելուց հետո ես նրանց բոլորին հետ կուղարկեմ իրենց գրողի տարած լեռները:

- Իսկ աղջի՞կը:

- Նա անվտանգ է: Ինչպես պլանավորել էինք՝ աղջիկը վարակվել է այս վիրուսով:

- Հիանալի է: Բայց ինչպե՞ս իմացար:

- Նրան հարցրեցի՝ կարոտե՞լ է արդյոք Արեգին: Եվ նա ի՞նչ պատասխանի. "Ո՞վ է Արեգը": Գլխավոր նշանը ստացել ենք, նա սկսում է ամեն ինչ մոռանալ, մեկ առողջ և մեկ հիվանդ արյուն, ամեն ինչ հիանալի է: Մտում է՝ գա ժամանակը: Արեգը արթնացավ ամբողջությամբ դատարկ սենյակում: Անգամ լուսամուտի կողպեքն էր փոխված:

Ներս մտավ Լիլիթը՝ ձեռքին նույն սկուտեղը, վրան տարայով ապուր և մի հաստ կտոր հաց: Հատակին նստած՝ բռնել էր վիզը, որի վրա մնացել էին հսկա լեռնաբնակի մատների հետքերը:

- Ոչինչ չստացվեց: Հիմա ես ի՞նչ անեմ: Խնդրում եմ, մի խորհուրդ տվեք: Մեկ անգամ էլ օգնեք ինձ:

- Հաց կերեք:

- Ի՞նչ: Ես հարցնում եմ՝ ինչ անեմ, ես ախորժակ չունեմ հիմա ուտելու:

-խնդրում եմ, հացը կերեք: Ձեզ կօգնի:

Կքանատելով՝ սկուտեղը դրեց նրա կողքին և գնաց: Չդիմանալով քաղցին՝ տղան վերցրեց հացը և կծեց: Սակայն չկարողացավ պոկել պատառը ատամներով: Հացի մեջ ինչ-որ բան կար: Մատներով սկսեց փորել այն. թղթի կտոր էր: Չգուշամիտ բաց արեց այն.

“Ցավում եմ, որ փախուստը չկայացավ: Այսօր երեկոյան դու ունես մի վերջին հնարավորություն: Միանձնուհիները բոլոր լեռնականներին ուղարկել են իրենց բնակավայր՝ տարածքը չի հսկվում: Իսկ կիրակի երեկոյան նրանք երգելու են մինչև առավոտ: Ես գիշերը ժամը երեքին կգամ, քո ու քրոջդ սենյակների դռները կբացեմ: Մնացածը ձեզնից է կախված, աննկատ դուրս եկեք եկեղեցուց: Միանձնուհի Լիլի”:

Իրադարձությունների հերթականությունը կտրուկ փոխվեց, Արեգը չէր սպասում նման շրջադարձի: Նա նամակը կարդաց ևս երկու անգամ, հետո երկու մասի բաժանեց և հերթով դրեց բերանը, թուղթը շատ բարակ էր, և տեղ գրավելու համար տառերը գրված էին շատ մանր: Վերջ, թուղթն այլևս չկա: Եկավ երեկո: Արեգի ձեռքի ժամը ցույց էր տալիս ժամը 19:00: Լսվեց միանձնուհիների ձայն: Արեգը զբաղվել էր երաժշտությամբ, և նրա համար շատ հետաքրքիր էր նրանց ձայնը: Չկար ոչ մի նվագակցություն, միայն նրանց ձայն էր՝ պարզ և հանգիստ: Սակայն այդպես հաճելի էր միայն առաջին ժամերը: Այնուհետև որքան շարունակվում էր, այնքան ձայները դառնում էին ավելի անտանելի և մի տեսակ ճնշող: Նրանց ձայնը դարձավ Արեգի համար նյարդերի խարտոց: Անընդհատ նայում էր ձեռքի ժամին, թե երբ են սլաքները ցույց տալու ժամը երեքը: Մութ էր, միայն հսկա լուսինն ու աստղերն էին լուսավորում երիտասարդի սենյակը: Իսկ նրանց ձայնը դեռ լսվում էր, ասես տարածվել էր եկեղեցու բոլոր անկյուններում:

- Տիկին,- շա՛տ ցածր ձայնով դիմեց Լիլին տիկին Գայանեին,- ինձ պետք է դուրս գալ: Ընդամենը մեկ րոպե, խնդրում եմ:

Լիլիի խոսելու ընթացքում միանձնուհի Գայանեն չդադարեց երգելը, միայն աչքերով համաձայնության նշան տվեց: Լիլին արագ քայլերով գնաց դեպի դուռը: Գայանեն ձեռքի շարժումով իր մոտ կանչեց միանձնուհիներից մեկին.

- Հետևիր աղջկան:

Այս խոսքերը լսելուն պես միանձնուհի Մարիամը հետևեց նրան: Լիլին գնաց եկեղեցուն կից մատուռ, բացեց գլխավոր դուռը, ոլորեց հնամաշ գորգը և բարձրացրեց դժվարակիր դուռը: Այնուհետև սևազգեստ աղջիկը, բռնելով զգեստի փեշից, երերուն սանդուղքով իջավ ստորգետնյա աշխարհ: Առաջացավ նեղ միջանցքով, որի գրեթե բոլոր անկյունները պատված էին խիտ և գարշելի սարդոստայններով: Երկար միջանցքը լուսավորում էր Լիլիի ձեռքի մոմը, որը վերցրել էր մատուռ մտնելուց առաջ: Միջանցքի վերջում նշմարվեց երկու դուռ. երկուսն էլ կողպված: Մոմը դրեց հատակին և գրպանից հանեց բանալիների կապոցը: Արեգը լսեց կողպեքի բացվելու ձայնը:

- Արի՛, արագացրո՛ւ:

- Էդ ու՞ր եք տեսց շտապում,- Լիլիի մեջքի հետևից լսվեց ձայն: Մթության միջից դուրս եկավ միանձնուհի Մարիամը,- փաստորեն տիկին Գայանեն չէր սխալվում, չնայած՝ նա երբեք չի սխալվում:

Արեգը բռնել էր Լիլիի ձեռքը և ձայնը լսելուն պես կանգնեց նրա առջև և կարծես փորձեց պաշտպանել նրան իր թիկունքում:

- Մարիամ, խնդրում եմ...

- Լռի՛ր, հիմա՛ր աղջիկ: Եթե քո մասին չես անհանգստանում, գոնե մեր մասին մտածիր, հազարամյակներ շարունակ բոլոր վիրուսներից նրանց նմաններն են մեզ փրկել:

- Նա, այսինքն նրանք,- շփոթվեց և շիկնեց ինքն իր ասածից: Այսքան ժամանակ չէր բարձրաձայնել իր կարծիքը: Այն էլ տղայի մասին,- նրանք ուրիշ են:

Միանձնուհի Մարիամը սկսեց ծիծաղել և արհամարհական հայացքով նայեց նրանց: Չհանդուրժելով նրա ծիծաղը՝ Արեգը միջամտեց.

- Ի՞նչն է այդքան ծիծաղելի:

- Դուք դեռ չե՞ք հասկացել,- ծիծաղից հետո շնչառությունը տեղը բերելով շարունակեց,- ախր ձեզ մոտ ստոկհոլմյան համախտանիշ է, դուք սիրահարվել եք:

- Ի՞նչ:

- Դե բավական է, արի, գնացինք, հիմա կգան և նորից կբանտարկեն նրան,- բռնեց Լիլիի ձեռքից և տարավ նրան միջանցքի ուղղությամբ:

- Բաց թող նրան,- հրեց Մարիամին և իր գիրկն առավ վախեցած աղջկան:

Մարիամի ոտքը ոլորվեց և նա ընկավ ու գլուխը հարվածեց անտաշ քարին:

- Ի՞նչ արեցի,- ահուղողով, լեզուն չորացած արտաբերեց Արեգը:

- Բանալիները: Բանալիները չկան, Արեգ:

- Ի՞նչ:

Եվ լսվեց այն մարդու ձայնը, որին ոչ ոք չէր սպասում:

- Սոնա՛: Փարք Աստծո, լավ ես,- դռանը հպվելով ասաց Արեգը:

- Ներեցեք, ո՞վ է:

Լսված գրական և ինչ-որ չափով պաշտոնական արձագանքը փայտացրեց Արեգին: Մի՞թե հարազատ քույրը չի ճանաչում եղբոր ձայնը դռան այն կողմից:

- Սո՛ն, քա՛ղցրս, ես եմ, Արեգը:

- Ես չեմ ճանաչում ոչ մի Արեգի:

Քրոջից նման պատասխան լսելը, այն էլ նման իրավիճակում, հավասար էր դաշույնով հարվածի: Արեգը ծնկեց դռան առջև, կարծես պատրաստվում էր մեղքերի թողություն ստանալ կարողինալի առջև:

- Սո-ոն,- արցունքները հոսեցին տղայի դեղնականաչավուն աչքերից: Հոսեցին և կաթացին ձեռքերին, որոնցից մեկը դիպավ ձեռքի թևնոցին: Սրբեց աչքերը և հանեց թևնոցը ձեռքից,- Սո՛նա, լսի՛ր: Վերցրու սա,- դռան տակով փոխանցեց թևնոցը,- թալիսմանի մյուս կեսը քո մոտ է: Հենց այդ թալիսմանի համար մենք

հետ վերադարձանք անտառ: Խնդրում եմ, ուշադիր նայիր: Դե հիմա խնդրում եմ տուր բանալին, պետք ա բացեմ դուռը, պետք ա գնանք:

Որոշ ժամանակ դռան երկու կողմերում տիրում էր լռություն: Եվ հանարծ լսվեց Սոնայի ձայնը.

- Արե՛գ, խնդրում եմ, բաց դուռը: Ես ուզում եմ տուն գնալ,- և դռան տակից նետեց բանալիները: Արեգը դողացող ձեռքերով վերցրեց կապոցը և փոխանցեց Լիլիին:

- Բացիր, խնդրում եմ, ո՞րն ա նրա սենյակի դռան բանալին:

- Բայց նա վարակված է: Պետք է պաշտպանվել:

- Փորձիր բանալիների սուր մասով պատռել շապիկս, կկապենք, վարակվելու հավանականությունը կքչացնենք:

- Դրսում ցուրտ է: Նման բան չենք կարող անել: Գիտեմ՝ ինչ կանենք,- առաջ բերեց սև գլխաշորը,- այստեղից կտրիր:

- Վստա՛հ ես:

- Այո:

Նրա գլխաշորի կտորը բավականին հաստ էր և հարմար էր դիմակ պատրաստելու համար: Միանգամից պատրաստեցին երեքը, երկուսով ծածկեցին իրենց քիթ ու բերանը, իսկ վերջինը Սոնայի համար էր:

Լիլին արագ բացեց դուռը: Արեգը չհասցրեց կանգնել, քույրը եկավ և ամուր գրկեց նրան: Արեգը քրոջն էլ հագցրեց դիմակը.

- Պետք է շտապենք,- կանգնեց և գիրկն առավ Սոնային:

- Այո, դուք վազեք քաղաքի ուղղությամբ: Ես կշեղեմ միանձնուհիների ուշադրությունը և մի բան կմտածեմ այս ամենը բացատրելու համար,- ասաց և նայեց միանձնուհի Մարիամի գրեթե արյունաքամ մարմնին:

- Ի՞նչ ես խոսում, դու մեզ հետ ես գալիս: Ես ամենը քո համար չե: Դու էստեղ միայն տառապում ես, դու էստեղ ես քո կամքին հակառակ:

Մի ձեռքով գրկեց քրոջը, մյուսով բռնեց Լիլիի ձեռքը, և վազելով գնացին դեպի քաղաք:

Փախուստի լուրը հասավ Գայանեի ականջին: Նա հետ կանչեց բոլոր լեռնեցիներին: Սակայն նրանք արդեն քաղաքում էին, իսկ լեռնեցիների մուտքն այնտեղ արգելված է:

Քաղաքում արդեն գտել էին վիրուսի դեմ դեղամիջոցը: Սոնան առաջիններից էր, ում ներարկեցին այն:

Մի քանի օր անց Արեգը և Լիլին վերադարձան այդ չարաբաստիկ եկեղեցին:

Միանձնուհի Մարիամի հետ կատարվածը բացատրեցին՝ որպես ինքնապաշտպանության հետևանք, որը ճշմարտությունն էր: Բայց այցի իրական պատճառը միանգամայն այլ էր.

- Տիկնայք,- դիմեց միանձնուհիներին Արեգը,- ներկայիս տեխնոլոգիաների օգնությամբ գիտնականները գտել են վիրուսի դեմ դեղամիջոցը: Մենք պատրաստակամ ենք այն հանձնել ձեզ, և դուք այլևս այս վիրուսի համար կարող եք չանհանգստանալ:

- Եվ ինչո՞ւ եմ,- շարունակեց Լիլին,- եկեք վերջ տանք տարիներ շարունակ իրականացվող այս արյունալի սովորություններին: Մենք հիմա ունենք ընտրության հնարավորություն, գիտությունը մեզ տալիս է այդ հնարավորությունը:

Եղան բազում տարածայնություններ: Միանձնուհի Գայանեն ցանկանում էր վերցնել դեղամիջոցը, սակայն մյուս միանձնուհիները մայրապետի նման որոշումը համարեցին թուլության նշան: Նրանք կարծում էին, որ այսքան տարիների ավանդությունները նման կերպով մոռանալը պատվաբեր չէ: Բայց կային նաև համախոհներ, որոնք համաձայն էիր մայրապետի որոշման հետ:

Միանձնուհիները, իհարկե՛ ոչ միանգամից, բայց համաձայնվեցին և հասկացան իրենց սխալը: Եվ երկու կողմերը պատասխան չտվեցին իրենց գործած մեղքերի համար՝ փոխադարձ լռությամբ: